ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2026 թ. մարտի 4-ի թիվ 525 որոշմամբ

ՌՀՀ ՌԵԿՏՈՐ Ե.Մ. ԵՄԱՆԴՈՅԱՆ

Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրերով հայկական բաժանմունքի 2026-2027 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի (այսուհետ՝ ՌՀՀ) բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի կրթական ծրագրերով (այսուհետ ՌՀՀ մագիստրոսի կրթական ծրագրեր) հայկական բաժանմունքի 2026-2027 ուսումնական տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ վճարովի) առկա և հեռակա ուսուցմամբ ընդունելության կարգը:

2. ՌՀՀ ՀՀ պետական կրթական չափորոշիչների համաձայն իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի ուսուցման լեզուն հանդիսանում է գրական հայերենը:

3. Առկա ուսուցման տևողությունը սահմանվում է 2 (առանձին կրթական ծրագրերի գծով մեկ) տարի, հեռակայինը՝ 2 տարի 6 ամիս:

4. ՌՀՀ մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանավարտներին տրվում է ՀՀ պետական նմուշի դիպլոմ:

5. ՌՀՀ մագիստրոսի կրթական ծրագրերի առկա ուսուցման ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտություններով.

061101.00.7 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)

- 061101.05.7 Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում

071301.00.7 Էներգետիկա

- 071301.05.7 Այլընտրանքային էներգետիկա **(մեկամյա ծրագիր)**

071401.00.7 Էլեկտրոնիկա

- 071401.03.7 Ինտեգրալ սխեմաների համակարգչային ճարտարագիտություն

041201.00.7 Ֆինանսներ

- 041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ

041301.00.7 Կառավարում

- 041301.01.7 Կառավարում
- 041301.27.7 Մարդկային ռեսուրսների կառավարում **(մեկամյա ծրագիր)**

041401.00.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)

- 041401.01.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)

041101.00.7 Հաշվապահական հաշվառում և հարկում

- 041101.02.7 Հաշվապահական հաշվառում և աուդիտ **(մեկամյա ծրագիր)**

042101.00.7 Իրավագիտություն

- 042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն
- 042101.05.7 Գործարարական իրավունք
- 042101.02.7 Սահմանադրական իրավունք, պետության և իրավունքի տեսություն
- 042101.03.7 Քաղաքացիական իրավունք և դատավարություն

042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

- 042802.03.7 Կրիմինալիստիկա **(մեկամյա ծրագիր)**

022801.00.7 Արևելագիտություն

- 022801.03.7 Իրանագիտություն

091801.00.7 Հանրային առողջություն և առողջապահություն

- 091801.05.7 Թվային առողջապահություն

011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն

- 011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ **(մեկամյա ծրագիր)**

101401.00.7 Սպորտ

- 101401.02.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) **(մեկամյա ծրագիր)**

6. Առկա ուսուցմամբ ՌՀՀ մագիստրատուրայի անվճար տեղերին մրցութային կարգով կարող են հավակնել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

7. Առկա ուսուցմամբ ՌՀՀ մագիստրատուրայի անվճար տեղերին մրցութային կարգով՝ ըստ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի (GPA) ցուցանիշի կարող են հավակնել ՌՀՀ և այլ բուհերի առկա և հեռակա ուսուցման ձևերի շրջանավարտները, որոնց ՄՈԳ-ը (GPA) կազմում է առնվազն 70 (2.8):

8. ՌՀՀ տվյալ մասնագիտության շրջանավարտներն առկա ուսուցմամբ անվճար տեղեր ընդունվում են մրցութային կարգով՝ ըստ ՄՈԳ-ի ցուցանիշի, առանց ընդունելության քննությունների:

9. Այլ բուհերի շրջանավարտները և ՌՀՀ այն շրջանավարտները, ովքեր փոխում են մասնագիտությունը, առկա ուսուցմամբ անվճար տեղեր ընդունվում են մրցութային կարգով՝ ըստ ՄՈԳ-ի ցուցանիշի, տվյալ մասնագիտությունից հանձնելով քննություն/հարցազրույց, որը գնահատվում է 20 բալանոց համակարգով:

10. Հավասար ՄՈԳ-երի և քննության/հարցազրույցի արդյունքում ստացած բարձր միավորի դեպքում՝ որոշում է կայացնում համապատասխան առարկայական քննական հանձնաժողովը:

11. Առկա ուսուցմամբ ՌՀՀ մագիստրատուրայի վճարովի տեղերին մրցութային կարգով կարող են հավակնել ՌՀՀ և այլ բուհերի առկա և հեռակա ուսուցման ձևերի շրջանավարտները:

12. ՌՀՀ շրջանավարտների ընդունելությունը տվյալ մասնագիտության վճարովի ուսուցման համակարգում կատարվում է առանց ընդունելության քննությունների:

13. Այլ բուհերի շրջանավարտները և ՌՀՀ այն շրջանավարտները, ովքեր փոխում են մասնագիտությունը, անցնում են հարցազրույց մասնագիտությունից:

14. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է միայն վճարովի սկզբունքով:

15. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդները պարտավոր են սահմանված կարգով և ժամկետում վճարել ուսման վարձավճարը, կնքել պայմանագիր, որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը:

16. Առկա ուսուցմամբ ընդունելության անվճար և վճարովի տեղերի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման ժամկետ է սահմանվում **ս.թ. հունիսի 8-ից մինչև 19-ը ներառյալ,** իսկ քննությունների անցկացման ժամկետ՝ **հունիսի 24-ից մինչև 26-ը ներառյալ:**

17. Վճարովի թափուր տեղերի առկայության դեպքում երկրորդ փուլով առկա ուսուցմամբ ընդունելության մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման ժամկետ է սահմանվում **ս.թ. օգոստոսի 21-ից-25-ը ներառյալ**, իսկ քննությունների անցկացման ժամկետ՝ **օգոստոսի 27-ից մինչև 28-ը ներառյալ**:

18. ՌՀՀ մագիստրատուրայի կրթական ծրագրերի **հեռակա** ուսուցման ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտություններով.

<u>041201.00.7 Ֆինանսներ</u>

- 041201.01.7 Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ

<u>041301.00.7 Կառավարում</u>

- 041301.01.7 Կառավարում

<u>041401.00.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)</u>

- 041401.01.7 Շուկայագիտություն (մարքեթինգ)

042101.00.7 Իրավագիտություն

- 042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն
- 042101.05.7 Գործարարական իրավունք

19. ՌՀՀ մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելությունը ՌՀՀ և այլ բուհերի շրջանավարտների համար իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ համապատասխան Ինստիտուտի որոշմամբ:

20. Հեռակա ուսուցմամբ ընդունելության մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի ընդունման ժամկետ է սահմանվում ս.թ. **սեպտեմբերի 14-ից 16-ը ներառյալ,** իսկ քննությունների անցկացման ժամկետ՝ **սեպտեմբերի 21-ից 22-ը ներառյալ**:

21. Ընդունելության արդյունքներով առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի կրթական ծրագրերի բացման համար ուսանողների համակազմի նվազագույն շեմ է սահմանվում 5-ը: Բացառիկ դեպքերում, նշված շեմը չապահովելու պարագայում, կրթական ծրագրի բացման հարցը վերապահվում է ՌՀՀ Գիտական խորհրդին՝ կրթական ծրագրի անվնասաբերության ապահովման պայմանով: Պայմանը չբավարարելու դեպքում դիմորդին հնարավորություն է ընձեռվում հրամանագրման դիմում ներկայացնել այլ, հարակից մասնագիտության/կրթական ծրագրի գծով:

22. Մագիստրատուրայի կրթական ծրագրերով ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմողները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝
    - անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր կամ նույնականացման քարտ (պատճենը),
    - սոցիալական քարտ,
    - բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմ և հավելված (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի, պատճենը),
    - փաստաթուղթ զինվորական ծառայության վերաբերյալ՝ զինհաշվառման փաստաթուղթ կամ զինվորական գրքույկ (պատճենը)՝ առկայության դեպքում:
    - 4 գունավոր, նույնատիպ լուսանկար (3×4 չափսի):

23. Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ դիմորդի կողմից:

24. Դիմորդի կողմից ներկայացված դիպլոմի իսկությունը պարզելու նպատակով ընդունող հանձնաժողովն իրավասու է ըստ անհրաժեշտության դիմորդից պահանջել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» ներկայացնել տեղեկանք դիպլոմի իսկության վերաբերյալ:

25. Մագիստրատուրա դիմողները փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար վճարում են 3000 դրամ, ինչպես նաև ընդունելության քննություններին մասնակցելու համար՝ 2000-ական դրամ յուրաքանչյուր (քննության/ հարցազրույցի) համար, որոնք նշված են դիմումներում: Անկախ ընդունելության քննություններին մասնակցությունից և արդյունքներից՝ գանձված գումարը հետ չի վերադարձվում: